ում։ Լճի ձկների տեսակները Վ. վեց է հաշ-ում։ Վերջինս ժամանակ չէ ունեցել լճի հա-բաւային եքերքն այցելել, ուր «աւելի թա-թարներ եւ եզիտիներ են ապրում, քան հայեր։ Եւ ոչ մի եւրոպացի ճամբորդ չէ եղել այն կողմերը։ Դիւրուան նրանց մասին միայն լո-վի բաներ է պատմում եւ առահասարակ շատ անճիշդ տեղեկութիւններ հաղորդում Սեւա-նայ լճի մասին»։

«Ես յաճախ էի այցելում,— շարունակում է Վ.,— լճի հիւսիսակողմը ընկած հայկական գիւղերը։ Տները կիսով չափ գետնի տակ են... Զորս կողմը՝ ճնշող աղքատութիւն։ Այդ գիւ-ղացիները Տաճկահայաստանից են ներգաղ-թած, 1829-ի ռուս-տաճկական հաշտութիւնից յետոյ»։

Եւ սակայն այդ գիւղացիները «շատ էլ ու-րախ չէին իրենց բնակավայրը փոխած լինել-նուն համար»։

Եւ դա հասկանալի է, նոր պայմաններում նրանց ապրած տնտեսական ծանր պայմաննե-րը նկատի ունենալով։ Յետոյ խօսք կ'անենք այն մասին, թէ Վաղներ ի՛նչ կարծիք ունի ռուս պաշտօնէութեան եւ նրա կեղեքիչ դերի մասին Հայաստանում։

Այս կապակցութեան մէջ գոհանանք առաջ բերելով նրա հետեւեալ խօսքերը միայն։

«Իւրաքանչիւր ընտանիքի հայր պարտա-ւոր է ռուս կառավարութեանը գլխահարկ եւ ութից մինչեւ տասներկու արծաթ բուբլի հո-գի հարկ վճարել,— ինչ որ շատ փող է այս-չափ աղքատ մարդոց համար։ Բացի դրանից՝ նրանք պարտաւոր են մասնակից լինել այն թաթար այրուձիի ծախքերին, որոնք ամէն տարի այստեղից մինչեւ Վարշաւա են գնում՝ իշխան Պասկեւիչի թաթար ձիաւոր պահակի մէջ մտնելու համար։ Եւ յետոյ, գաւառի վատ վճարուող եւ ագահ ռուս պաշտօնեաները ան-վերջ ճնշում են գիւղացիներին։

«Տարուան մէջ միայն չորս, շատ-շատ հինգ ամիս միայն — դանդաւում էին ինձ այդ հայերը — կարող ենք մենք մեր հօտերը արօտի հանել չրջակայ խստաշունչ լեռները»։

Իրենց ունեցած յարդի եւ չոր խոտի պա-շարը չի բաւականացնում ձմեռը, որից եւ շատ անասուն է կոտորւում։ Դրա վրայ աւելացրէք եւ այն, որ փոստային կայարանի ռուս պետը չրջանի լաւագոյն արօտները իւրացրել է, թէ-եւ բնաւ իրաւունք չունի այդ անելու» (46)։

Սեւանայ վանքի միաբանները եւս դառնա-պէս դանդաւում են ռուս վարչութեան դէմ, քաշուելով սակայն անուններ տալ։ Այդ ամէնի վրայ աւելանում է եւ այն, որ մաքսային նա-խամուտ արգելքների պատճառով դպալպէս ընկնում է Թիֆլիս-Երեւան առեւտրական ճա-նապարհի նշանակութիւնը, պակսում չրջա-կայ գիւղացիների եկամուտը փոխադրողներից։ Դրա փոխարէն, ընդհակառակը կեն-դանանում Թաւրիզ-Տրապիզոն առեւտրական ճամբան։

Սեւան-Երեւան ճանապարհի ակզբին իսկ՝ Վաղների աչքին է ընկնում նոյն այդ «Ալպեան լճից» դուրս եկող ջուրը, որ Վաղներ ոչ թէ գետակ (Հրազդան), այլ ջրանցք է անուա-նում. «Թւում է, թէ դա աւելի շուտ բնու-թեան քան թէ մարդու կեանքի գործ է, հա-կառակ որ երկրում իշխող աւանդութիւնը հա-կառակն է պնդում»։

Ասել է ուրեմն՝ այն ժամանակները Հա-յաստանում դեռ պահւում էր մի աւանդու-թիւն — անշուշտ հնագոյն ժամանակներից ե-կող — համաձայն որի արուեստական ջրանցք է համարուել Սեւանից հոսող ջուրը։ Վաղներ ինքը եւս չէ համարում այն Զանգուն (Հրազ-դանը), որի ակունքները նա դէպի հիւսիս ընկնող լեռների մէջ է դնում, եւ որին արդէն — Զանգուին — իր հոսանքի վրայ նոր միա-նում է լճից դուրս հոսող ջուրը։

Հայաստանի հրաբխային բնութիւնն էլ, ասում է Վ., սկսւում է Սեւանի եւ Երասխի հովտի միջեւ ընկնող լեռներում։ Այստեղ բը-նագէտ հեղինակը դարձեալ մի քանի հետա-քրքրական դիտողութիւններ է անում Հա-յաստանի ֆիզիքական աշխարհագրութեան շուրջը։

Գիշերելով Էյլար իջեւանում, Վաղներ յաջորդ օրը Երեւան է հասնում, ուր եւ գրա-նում է առաջ ընկած իր երկու ողեկիցներին — Աբովեանին եւ բարոն Հ-Գ-ին։ Վ-ին եւս պի-տալիր ընդունելութիւն է անում, ինչպէս քիչ յետոյ Հաքսհաուզէնին, քաղաքի պարէտ ֆոն Քիլ (Kiel), ծագումով գերման։